ՃԼԳ.

Հռովմէն Սարգիս Արքեպս. Սարաֆեանի վրայ անհատ ուրիշ նամակ մը ևս.

Գերյարգելի և գերապատուելի տեառն և հօրդ իմոյ որդիական սիրով
և յարգութեամբ սուրբ աջն համբուրեմ

... Զայս գիրս անցած շաբաթ պիտի գրէի բայց նոյն օրն հասանելով գեռապայծառ Սէրգիս եպիսկոպոսն ժամանակ ոչ ունեցայ գրելոյ. ահա, տէր իմ, եկեալ հասաւ այս յարգելի եպիսկոպոսս և հրամանքդ կրկին յանձնար[ար]ութիւն գրեալ էիր ինձ նուաստագունիս, ինչ կարող է տկարութիւնն իմ այսպիսի անձու ծառայել և պատուել, գիա[ր]դ և իցէ ասի ուրեան, թէ ի յամենայն իրս որ համարիցէ զիս յարմար, մեծաւ յօժարութեամբ պատրաստ եմ ծառայել. նախ քան զգալն և ետ հասանելոյ խօսեցայ ոմանց մեծաւորաց, թէ որպիսի անձ իցէ կամ որչափ պատւոյ արժան. երեկեան ժողովքի սէքրէթարն մօնսինեօր լէրքարն եկաւ առ ի յարգել զսա յոյժ սիրով, որ ոչ է սովորութիւն առնել այսպիսի յարգութիւն եպիսկոպոսաց Հայոց. ըստէփան վարդապետն գնա ընդ իւր թէրճիմանութիւն. սա ասէ թէ ես տեղս կենալու չեկի, այլ վերստին վէնէտիկ դառնալոց եմ, և ես ոչ գիտեմ թէ իրաւի իւր միտն այս է՝ կամ թէ վասն խոհեմութեան այսպէս խօսի. Վրդանէս եպիսկոպոսն ի հասանելն 3 օր կերակրեց հանդերձ իւրայնովք յոյժ քաղցրութեամբ և սիրով. միայն ցաւիմ որ ստեփան վարդապետն ընդ յովհաննէս վարդապետին (որ է աշակերտ սոյն Սէրգիս եպիսկոպոսին) որում ինչ խռովութեան ցանած են և սոյնս հարկաւորապէս յայտնվելոց է:...

Ծառայ Յոհաննէս պատկերահան

Ցամի տեառն 1745 *Նոյեմբ.ի* 13
[*Հռովմ*]

ՃԼԴ.

Սարգիս Արքեպիսկոպոս կապադովկեցւոյ մեր Դիւանի նամակներու շարքին մէջ կայ 1746 *Ցունուար* 1 *թուակիր թուղթ մը առ Մխիթար, սկիզբը հետևեալ տաղաչափով.*

Արմաւենւոյդ | Բարձրադիտակ | Սրբաստեղուն
Բարւոքապէս | Արմատացեալ Ցար | Անշարժուն
Համեղ պտ[ղ]օք | Առատացեալ | Բախշան սիրուն
Ցարաս[աղ]արթ՝ | Բախաբերուն | Գեր կատարուն.
Կրօնիւ մաքուր | Ուղղադաւան, և | Սրբասուն
Զիք քան զքեզ | Եռամեծար այր | Իմաստուն
Ծառ որ կամիմ | Ես յետնեցեալս | Սրտիւ բծուն
Անհատ սիրով | Լիագունիւ ձօնել | զՈղջուն:

Գալեմքեարեան վերոյիշեալ նամակներն հրատարակած ատեն պէտք չէ տեսած այս վերջին թուղթն ի լոյս ընծայել, որովհետև Ծննդեան և Նոր Տարւոյ շնորհաւորագիր մ'է ան, ինչպէս ինքն ալ բաւականացած է այս յիշատակութեամբ անցնիլ, դնելով լոկ տաղաչափը: Սակայն, չենք գիտեր ինչո՞ւ, անոր երկու վերջին տողերը կը պակսին իր հրատարակութեան մէջ, ինչ որ սխալ հետևանքի մը տարած է զինքը՝ երբ կ'ըսէ. « Առաջին երկու սիւներու գլխագիրներն ընթացիկ՝ իսկ վերջին սիւնը